

**ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմխիթարները. մխիթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք, միայն անո՛նց ծառայէ, անոնց շո՛ւրջ դարձիր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք քաղցր խօսելով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղփատներուն ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նրկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղփատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները: Անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը, միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանքով եւ նամբո՛ւ դիր աղերսանքով: Եթէ այսպէս հիւրընկալես ոչ թէ տուած, այլ՝ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած, այլ՝ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր, որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղփատները արհամարհուած չգգան եւ դուն, քու կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս որպէս օրինագանց մը, նման անոր որ կ'ըսէ. «Ան, որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէք. «Պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղփատներուն պիտի ըսէք. «Գնա՛ եւ սանդիսամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաս, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէք եւ դուք իբրեւ օրինագանցներ կը մեղադրուիք օրէնքով: **Յովհան Մանդակունի՝ ձառեր**

**ՄԵԾ ՊԱՅՈՑ ՇՐՋԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**

Այս ժամերգութիւնները ժողովրդական ըմբռնումով, ցանցուած են որպէս Հսկումի ժամերգութիւններ, որոնք վանական ծագում ունին, այսինքն՝ վանքերու մէջ կը կատարուէին. Խաղաղականը՝ մայրամուտէն ետք, իսկ Հանգստեանը՝ քանակէն առաջ: Խաղաղական ժամերգութիւնը կը միացուի Քրիստոսի գերեզման դրուելու, դժոխք իջնելու եւ հոգիներուն խաղաղութիւն պարգեւելու յիշատակին: Այս ժամերգութեան ընթացքին կ'երգուին Ներսէս Շնորհալիի «Շնորհեա՛ մեզ Տէր», «Նայեաց Սիրով» եւ «Ի՛ քէն հայցեմք» հոգեշունչ շարականները: Հանգստեան ժամերգութեան ընթացքին, Գրիգոր Նարեկացիի «Ի Խորոց Արտի» խորհմաստ աղօթքը իւրաքանչեւ գոյն կու տայ ժամերգութեան, որուն ընթացքին կը կարդացուի նաեւ Ներսէս Շնորհալի Հայրապետի՝ «Հաւատով Խոստովանիմ» անձնական աղօթքը, որ ինքնին ցոյց կու տայ մարդուն մեղքէն թօթափուելու նիւթ ու գիտակցութիւնը եւ կը հրաւիրէ գինք Բարի Մտածում, Բարի Խօսք եւ Բարի Գործ ունենալու:

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ (Բ. Մաշկեւորցի)**  
Դադրի՛ր մեղք գործելէ եւ արտասուալի՛ մօտեցիր Անոր, սիրտիդ խորերէն միայն «մեղա՛յ» ըսէ եւ բոլոր մեղքերդ կը ջնջուին:

**ՀԱՍՅԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագրերը



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ՄԱՐՏ 2021

ԹԻՒ 10

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 56.1-57.21 Բ. Եփ. 4.17-32  
**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒ 16.1-9**

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒ 16.1-9**

*Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.-*

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով, թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել: Ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ի՞նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Ո՞րքան պարտք ունիս տիրոջ»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դո՞ւն որքան պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա ըսելով գոզեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ընեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

ԱՌԱԿ 9

Մի՛ յանդիմաներ չարագործները, որպէսզի քեզ չատեն: Յանդիմանէ՛ իմաստունը եւ ան պիտի սիրէ քեզ, իսկ երբ կը իրատես անմիտը, ան աւելի կ'ատէ քեզ: Իմաստունին բացատրէ՛ շարժառիթը, ան աւելի իմաստուն կը դառնայ: Ուղղամիտին սորվեցո՛ւր, ան աւելի ընդունակ կը դառնայ: Առակ 9.5-6

Ս. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Յովհան Օձնեցի հայ եկեղեցւոյ փառքերէն մէկն է: Ան կաթողիկոսական աթոռ կը բարձրանայ (717-728) յաջորդելով Նդիա Արմիշեցի կաթողիկոսին:

Ս. Յովհան Տաշիրք գաւառի Օձուն գիւղէն է եւ աշակերտը՝ Թէոդորոս Քոթեմաւորին, որ իր ժամանակի ամէնէն նշանաւոր աստուածաբաններէն եղած է: Կ'ենթադրուի, թէ ան հելլենական ուսումնարանի մը մէջ կրթուած էր: Իբրեւ իմաստուն հովուապետ, իր կաթողիկոսութեան տարիներուն ընթացքին հեռու կը մնայ յունասեր միտումներէ, թէ՛ վարդապետական մարգին մէջ եւ թէ՛ քաղաքական ուղղութեան վրայ: Ան իր շնորհները լաւագոյնս կ'օգտագործէ իր պաշտօնին բովանդակ տեւողութեան ընթացքին եւ երկրին քաղաքական պատեհութենէն օգտուելով՝ ազգային եկեղեցւոյ կազմակերպութիւնը հաստատուն հիմքով վրայ կը դնէ: Իր այդ քաղաքականութեան առաջին պտուղը կ'ըլլայ Էսմէր ամիրայանտէն խնդրել, որ քրիստոնեաները չբռնադատուին իրենց հաւատքը փոխելու, եկեղեցիներէն հարկ չպահանջուի եւ քրիստոնէական պաշտամունքը ամէն տեղ ազատօրէն կատարուի:

Իր հայրապետութեան երկրորդ տարին, Դուիմի մէջ կը գումարէ եկեղեցական ժողով մը, որուն ներկայ կը գտնուին անլի քան 30 եպիսկոպոսներ:

Իր հայրապետութեան երկրորդ տարին, Դուիմի մէջ կը գումարէ եկեղեցական ժողով մը, որուն ներկայ կը գտնուին անլի քան 30 եպիսկոպոսներ:

Ժողովի ընթացքին կը խօսի իր նշանաւոր ասեմաբանութիւնը, որ կը սկսի «Համբերողացն նախատիպ մեծն Յովր» բառերով:

Այս ժողովին կը սահմանուին երեսուցորդ կանոններ: Բացի այս կանոններէն, Օձնեցի Հայրապետ եկեղեցական կանոններ կը հաւաքէ եւ կը կազմէ առաջին հայ կանոնագիրքը, որ ժամանակի ընթացքին հետգիտէ կը կատարելագործուի: Ս. Յովհան Օձնեցի կը յատկանշուի աղանդաւորներու դէմ իր մղած պայքարով եւ այս տեսակետով յաւելտ պիտի մնան իր «Ընդդէմ երեսուրականաց» եւ «ընդդէմ Պաղիկեանց» գրութիւնները: Ան նաեւ ժամագիրքի կարգաւորիչներէն մէկը եղած է, գրելով «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գիրքը, «Աւագ Ուրբաթ»-ի շարականները, «Մեղաք յամենայնի»-ն եւ ուրիշ գործեր:

Ս. Յովհան Օձնեցի իր կեանքի վերջին հանգրուանին Սոթեր լեռան վրայ իր կառուցած եկեղեցւոյ մէջ նգնական կեանքի կը նուիրուի «պահօք, աղօթիւք եւ տփնութեամբ» եւ «խաչաչարչար նգնութեամբ», իրեն ընկերակից ունենալով Գեորգ Սփանչեպետը եւ Մատթէոս Խոտաբարակ վարդապետները:

Ս. Յովհան Օձնեցի Հայրապետ կը վախճանի 728-ին: Անոր բարձր իմաստութեան եւ սրբութեան համբաւը միշտ վառ կը մնայ յաջորդ սերունդներու սրտին մէջ:

Հայ առաքելական սուրբ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս տարի Սուրբն տօնը կը գուգադիպի Շաբաթ, 6 Մարտ, 2021-ին:

ՀՈԳԵՒՈՐ ՊՍՏԳԱՍ

Երբ գրկուինք տարրական բաներէ գիտնանք, որ մեծ օրհնութիւններ կը սպասեն մեզի **«Այդ գիշեր բան մըն ալ չբռնեցին»**

Առաքեալները սկզբնական հանգրուանին գրկուեցան քանի մը ձուկեր բռնելէ, բայց յետոյ անոնք իրենք զիրենք դէմ յանդիման գտան իրենց ակնկալութիւնը անդրադարձնող մեծ քանակութեամբ ձուկի: Եթէ առաքեալները բռնած ըլլային 10-15 ձուկեր, անոնք յաւելեալ ձուկերու կարիքը պիտի չզգային, եւ ոչ ալ Քրիստոս կարիքը պիտի զգար այդպիսի հրաշք մը գործելու:

ՄԵՐ ՍՈՐԿԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Երբեմն աստուածային նախախնամութիւնը թոյլ կու տայ, որ գրկուինք որոշ պզտիկ բարիքներ՝ մեզ արժանացնելու համար անլի մեծ բարիքներու, ճիշդ ինչպէս առաքեալներուն հետ պատահեցաւ: Ասիկա Աստուծոյ յատուկ գործելակերպ մըն է, գոր հաւատացեալ մարդը պէտք է գիտնայ: Հաւատացեալ մարդը պէտք է գրկանքը համբերութեամբ եւ սիրով տանի, միշտ յիշելով որ գրկանքին ետին աստուածային օրհնութիւններ կան մթերուած իրեն համար:

ՊԱՇՏՅՈՂՈՒԹԻՒՆԸ  
Պահեցողութիւնը թշնամիին դէմ հզօր աշտարակ մըն է, եւ Սատանայի բոլոր նետերուն դէմ՝ ամուր պարիսպ մը:  
(Յովհան Մանդակունի)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԵՐՔՈՂԵՆ ԼԱՏՈՒԾՈՅ ՓՎՈՔԸ Կարդա՛ր ՍԱՂՄՈՍ 8

Ո՛վ ՏԷՐ, մեր ՏԷՐԸ,  
Ի՛նչ փառահեղ է անուող ամբողջ աշխարհի վրայ:

Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիւսեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լուսթեան մատնես թշնամիներդ եւ հակառակակորդներդ: Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ. «Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կուտաս անոր»:

Ձայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր: Քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները, երկինքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛վ ՏԷՐ, մեր ՏԷՐԸ,

Ի՛նչ փառահեղ է անուող ամբողջ աշխարհի վրայ:

ԱԶՆՈՒԱԿԱՆ ՄԱՐԴԸ  
Ազնուական անձը չի շփանար երբ զինք կը գովեն, եւ չի տխրիր երբ զինք կը վարկաբեկեն: Ան անայլայլ կը մնայ թէ՛ բարի խօսքերուն դիմաց եւ թէ՛ չար: